**Արձանագրություն N 2**

**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

11 ապրիլի 2025թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ Լ. Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ն. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Բաբիկյան

Քարտուղար՝ Մ. Եսայան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2025թ. ապրիլի 11-ին, ժամը 10:00-ին:
2. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:
3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:
4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2025թ. ապրիլի 14-ին, ժամը 10:00-ին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2025թ. ապրիլի 15-ին, ժամը 10:00-ին:

**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

15 ապրիլի 2025թ.
ժամը՝ 10:00

6. << ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2025թ. ապրիլի 14-ին, ժամը 10:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | Վեգա ուորլդ ՍՊԸ | ք. Երևան, Թումանյան 4/1, հեռ. 099000048 |
| 2 | ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ | ք.Երևան, Գ. Նժդեհի21, հեռ. 010449968 |
| 3 | Աքսել ՍՊԸ | ք. Երևան, Թումանյան 8, հեռ. 096701106 |
| 4 | Փրիթի Ուեյ ՍՊԸ | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/1, հեռ. 077723135 |
| 5 | ՄԻՆՈՆ ՍՊԸ | ք.Երևան, Կիևյան Փ. /Շ 16/ 8 / 814, հեռ. 098570007 |
| 6 | ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ | ք. Երևան, Խորենացի փ., շ.72/12, հեռ. 077474006 |
| 7 | ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | ք. Երևան, Կիեվյան փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028, հեռ. 091575572 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի նախահաշվային գինը | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վեգա ուորլդ ՍՊԸ | | ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ | | Աքսել ՍՊԸ | | Ֆրիֆի Ռւեյ ՍՊԸ | | ՄԻՆՈՆ ՍՊԸ | | ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՌՖԹ ՍՊԸ | | ՍՈՂՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ | |
| | | | | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | | Գնային առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Օդորակիչ | հատ | 2 | 320000 | 204000 | 244800 | 207337 | 248804.40 | 256667 | 308000.40 | 266300 | 319560 | 266500 | 319800 | 333333 | 399999.60 | 5500000000 | 6600000000 |
| 2 | Օդորակիչ | հատ | 14 | 3500000 | 2050000 | 2460000 | 2093000 | 2511600 | 2887137 | 3464564.40 | 2550300 | 3060360 | 2916600 | 3499920 | 3555333 | 4266399.60 | 2300000 | 2760000 |

*Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը

9. Համակարգում ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի կողմից՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, և ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից՝ 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

11. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կցվել և ներկայացվել է պատշաճ, սակայն ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը.

- ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում չի հստակեցվել սառեցնող գազը (սառնագենտ)՝ R 32 կամ R 410A և երաշխիքային ժամկետը՝ հանելով առնվազն բառը:

12. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

13. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2025թ. ապրիլի 17-ին, ժամը 10:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

17 ապրիլի 2025թ.
ժամը՝ 10:00

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ի կողմից համակարգում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նոր շտկված նկարագիր:

15. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2025թ. ապրիլի 18-ին, ժամը 10:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

**<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

18 ապրիլի 2025թ.
ժամը՝ 10:00

16. Հանձնաժողովը որոշեց «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող, ուստի ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/8>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց

- ընտրված մասնակից ճանաչել
  - «Վեգա ուորլդ» ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,

- մերժել մյուս մասնակիցների հայտերը, մասնավորապես՝
  - ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
  - Աքսել ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
  - Փրիթի Ուեյ ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
  - ՄԻՆՈՆ ՍՊԸ-ին՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով,
  - ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

17. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

18. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------------------- Լ. Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------------------- Ն. Պետրոսյան

---------------------- Ա. Բաբիկյան

Քարտուղար՝ ---------------------- Մ. Եսայան